



Ի՞նչ սկզբունքով են ընտրում ազգային պարկի սնօրեններին

«Դիլիջան» ազգային պարկում վերջին ամիսներին տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես նաև՝ Բնապահպանության նախարարության մի շարք ստորաբաժանումներում կադրային փոփոխությունների խնդիրը մշտապես եղավ հանրության ուշադրության կենտրոնում: Ելնելով խնդրի կարևորությունից մեր էլեկտրոնային թերթը նպատակահարմար գտավ տպագրել Հրապարակ. առկայքում օրերս հրատարակված նյութը, որում մի շարք կարևոր հարցերի շուրջ հստակ պարզաբանումներ է տալիս Բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը:



«Դիլիջան ազգային պարկի» շուրջ ծավալվող իրադարձությունների և տնօրենների փոփոխության մասին մենք գրել էինք: Հիշեցնենք, այս պարկում ապօրինի ծառահատումներ են արվել, հենակետ է այրվել, հարուցվել են քրեական գործեր, կան նաև ձերբակալվածներ: «Դիլիջան ազգային պարկի» տնօրենին վերջին անգամ փոխեցին այս տարվա հուլիսին: Արծվիկ Մինասյանի հրամանով նշանակվեց Արմեն Աբրահամյանը: Նրանից առաջ ԱԺ պատգամավոր Մուրադ Մուրադյանի որդին էր՝ Սահակ Մուրադյանը, ով երկար չպաշտոնավարեց և միայն անհասկանալի հանգամանքների արդյունքում չհայտնվեց քրեական գործով անցնողների ցանկում, քանի որ չարաշահումները չէին կարող առանց տնօրենի մասնակցության կամ գոնե իմացության իրականացվել: Մուրադյանից առաջ էլ Աշոտ Դավթյանն էր,

ով այժմ անցնում է քրեական գործով: Ուշագրավ է, որ «Դիլիջան ազգային պարկի» այս երեք տնօրեններից և ոչ մեկը տեղացի չէ, ասենք՝ Դիլիջանից կամ հարակից համայնքներից: Մեզ հետ զրույցում Հաղարծինի նախկին գյուղապետն անգամ տարակուսանք էր հայտնել, թե մի տեղացի չկա, որ դրսից են մարդ նշանակում: Ի՞նչ սկզբունքով են ընտրում բնության հատուկ պահպանվող տարածքների ԲՀՊՏ-ների ղեկավարներին, որքանով է արդյունավետ տեղացիներին այս պաշտոնում նշանակելը, և մյուս ԲՀՊՏ-ներում ովքե՞ր են տնօրենները: Այս հարցերի շուրջ զրույցեցինք բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանի հետ:

• Ի՞նչ սկզբունքով են ընտրում ազգային դարկի սնօրեններին

Սկիզբը էջ 1 /

Յոթնամյա ընտրությունները, թե ինչպես են որոշել փոխել պարկի տնօրենին և նշանակել Արմեն Աբրահամյանին: «Նախարարը որ փոխվեց, նշանակվեց Արծվիկ Մինասյանը, մենք հասկացանք, որ «Դիլիջան ազգային պարկում» պորբլեմ կա: 2016-ի դեկտեմբերից սկսած՝ մեր տեսչական խումբը սկսեց «Դիլիջան ազգային պարկում» ստուգումներ իրականացնել: Ստուգումները 2014-ից սկսած էին, և հայտնաբերվեցին մոտ 6 հազար 300-ի կարգի հատված ծառեր: Սրա շրջանակներում առաջին պլան մղվեց կադրային քաղաքականության փոփոխությունը: Այս համատեքստում նախորդ տնօրենն իր դիմումով դուրս եկավ աշխատանքից: Առաջադրվեց հետևյալ պահանջներից մեկը, որ մարդիկ պիտի լինեն ավելի կայուն բնավորությամբ, ունենան համապատասխան որակներ, և, ինչո՞ւ չէ, նաև հին կապերը մի քիչ անհանգստացնող էին այս պարագայում: Այսինքն՝ եթե նախկինում ինքը «Դիլիջան ազգային պարկի» աշխատակից լիներ և նշանակվեր տնօրեն, դա այլ պարագայում կարող էր դրական նշանակություն ունենալ, բայց այս պարագայում կարող էր ունենալ նաև բացասական ազդեցություն, որովհետև ինքն այդ ապօրինի գործողությունների հետ կարող էր կապեր ունենալ», -ասաց պարոն Յոթնամյա ընտրությունը՝ նշելով, որ իրենց ընտրած կադրը՝ Արմեն Աբրահամյանը, նշած որակներին համապատասխանում է: Յոթնամյա ընտրության խոսքով՝ ներքին կադրային քաղաքականությունն արդեն իրականացնում է Աբրահամյանը, արդյունքում պարկում աշխատում են ինչպես դիլիջանցիներ, այնպես էլ մյուս մարզերի բնակիչներ: Յոթնամյա ընտրությունը, այդուհանդերձ, կարծում է, որ տնօրենի բարեխիղճ աշխատանքը կապված է ոչ թե տեղացի լինել-չլինելու հետ, այլ նրա մարդկային որակների: «Եթե մենք դիտարկում ենք հետևյալ տեսանկյունից, որ եթե տեղացի է, անձնական կապեր ունի ապօրինի ծառահատողների հետ, սա կարող է ունենալ իր բացասական ազդեցությունը: Եթե այդպիսին է տեղացին, եթե տեղացին այդպիսին չէ և այնքան

սկզբունքայնություն ունի, որ որևէ մեկի հետ չի մտնում հանցավոր համաձայնությունների մեջ, և դրան էլ գումարվում է այն, որ ինքը տիրապետում է տեղական բնակչության հոգեբանությանը, տարածքին, անտառներին ծանոթ է, սա էլ կարող է ունենալ իր դրական ազդեցությունը», -ասաց նա: Պարզվում է՝ միայն «Դիլիջան ազգային պարկում» չէ, որ վերջին ամիսներին կադրային փոփոխություններ են եղել: Մյուս 6 ԲՀՊՏ-ներից մի քանիսում ևս տնօրեններ են փոխվել այս տարի հոստոսի արգելոցում փոփոխություն չի եղել, Ձանգեզուրում եղել է, Ջիկատարում չի եղել, «Արփի լճում» եղել է, «Արգելոցապարկայինում» եղել է: Էլի մարդկային որակների հիման վրա են եղել մեր նշանակումները: Ընդ որում՝ բոլորը տեղացիներ են նշանակված: Մյուսինքնում նշանակվել է կապանցի, Շիրակում «Արփի լճի» տնօրեն նշանակվել է Շիրակի նախկին մարզպետ Յուսեփ Սիմոնյանը: «Դիլիջանը մեր ամենամատառաշատ ու ամենախոցելի հատվածն է ապօրինի գործունեության տեսանկյունից, դրա համար այն հիմա բոլորի ուշադրության կենտրոնում է, ու հիմա փորձում ենք ոչ միայն կադրային փոփոխություններով, այլ նաև այլ միջոցներով կարողանալ կարգավորել վիճակը», -նշեց Յոթնամյա ընտրությունը: Մյուս ԲՀՊՏ-ներում կատարված մեր տնօրենների նշանակումը ևս պատճառաբանված էր նախորդ տնօրենի կողմից ոչ արդյունավետ կառավարմամբ, իսկ «Արփի լճում» էլ՝ անգամ քրեական գործի հարուցմամբ: ԲՆ աշխատակազմի ղեկավարը վստահեցրեց, որ «Արփի լճում» նախկին մարզպետ, դաշնակցական Յուսեփ Սիմոնյանի նշանակումը կապ չունի նրան պաշտոնով ապահովելու հետ, «Սա հստակ ու սահմանված ասում են՝ մենք նախորդ տնօրենի ազատաման խնդիրը դրել էինք շատ ավելի շուտ, քան Սիմոնյանի մարզպետի պաշտոնից ազատվելն էր: Մարզպետն ազատվեց-չազատվեց, «Արփի լճի» տնօրենն ազատվելու էր»:

ՎԱՅԵ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ բնապահության նախարարի առաջին տեղակալը ներկայացրել է ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի 23-րդ համաժողովի արդյունքները



Նոյեմբերի 25-ին Արմենպրեսի մամուլի սրահում ՀՀ բնապահության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը ներկայացրել է նոյեմբերի 6-17-ին Բոննում տեղի ունեցած ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) 23-րդ համաժողովի/Կողմերի կոնֆերանս/ արդյունքները: Հանդիպմանը մասնակցել է նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանը: 23-րդ Կողմերի կոնֆերանսին, որը նախագահում էր Ֆիջիի կառավարությունը՝ սերտորեն համագործակցելով Գերմանիայի կառավարության հետ:

Հարունակությունը էջ 3 /

• ԶՅ բնապահության և միջավայրի առաջին տեղակալը ներկայացրել է ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության ԵՐՁԱՆԱԿԱԿԻՆ կոնվենցիայի 23-րդ համաժողովի արդյունքները

Սկիզբը էջ 2 /

Ներկա են գտնվել ավելի քան 16.000 մասնակիցներ, այդ թվում՝ 9.200 պետական պաշտոնյաներ, 5.500 ներկայացուցիչներ ՄԱԿ-ի մարմիններից, գործակալություններից և միջկառավարական ու քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, ինչպես նաև 1200 ներկայացուցիչներ միջազգային առաջատար լրատվամիջոցներից: Կոնֆերանսին հիմնականում քննարկվել է Փարիզի համաձայնագրի դրույթների կատարման առաջընթացը և ընդունվել են որոշումներ համաձայնագրի ներքո սահմանված մինչև 2°C գլոբալ ջերմաստիճանի բարձրացման պահպանման նպատակի իրականացման համար: Այս համատեքստում Կողմ երկրները կարևորել են հարմարվողականությանն ուղղված ֆինանսական ռեսուրսների ապահովման գործընթացները՝ սահմանելով անհրաժեշտ միջոցառումներ Զարմարվողականության հիմնադրամի շարունակական հիմունքներով գործելու հնարավորության համար:

Էրիկ Գրիգորյանը ներկայացրել է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման և վերականգնվող էներգետիկայի ազգային քաղաքականությունը, ինչպես նաև խոսել Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի մասին: Նախարարի առաջին տեղակալը կարևորել է տեխնիկական, տեխնոլոգիական և ֆինանսական աջակցության ազգային կարիքները «Ազգային մակարդակով սահմանված գործողությունների/ներդրումի» ներքո սահմանված հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացման համար: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ Բնապահության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը թվարկել է այն բոլոր օգուտները, որոնք ստանում է և կստանա Հայաստանի Հանրապետությունը կլիմայի փոփոխությունների հարմարվողականությանն ուղղված միջազգային գործընթացներին մասնակցելու արդյունքում:

Միայն Տեղական ինֆրակառավարման մարմինների հետ սերտորեն համագործակցելով բնապահության և կլիմայի հարցերին կարելի է լիարժեք լուծումներ



ԲՆ բնապահության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Ե.Տերտերյանն աշխատանքային այց է կատարել ԶՅ Գեղարքունիքի մարզ: Այցի շրջանակներում տեսչական մարմնի ղեկավարը հանդիպեց ԶՅ Գեղարքունիքի մարզպետ՝ Կ.Բոթոյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին ուժային կառույցների, տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, Տեսչական մարմնի տարածքային բաժնի աշխատակիցներ: Ողջունելով հյուրերին՝ Ե.Տերտերյանը կարևորեց Տեղական ինֆրակառավարման մարմինների, ուժային կառույցների հետ սերտ համագործակցությունը բնապահության և ընդերքի վերահսկման և ամբողջական լուծման համար: Հանդիպման ընթացքում քննարկվեցին «Սևան» ազգային պարկի էկոհամակարգի, անտառային ռեսուրսների վերահսկման ու շրջակա միջավայրի

պահպանման հետ կապված այլ հարցեր: Քննարկման ընթացքում Կ.Բոթոյանը ներկայացրեց մարզում բնապահության միջոցառումների կատարման ընթացքն ու հետագա ծրագրերը: Կողմերը շնորհակալություն հայտնեցին միմյանց՝ պատրաստակամություն հայտնեցին ամրապնդել հետագա փոխգործակցությունը: Տեսչական մարմնի ղեկավար Ե.Տերտերյանի գլխավորած պատվիրակությունը Գեղարքունիքի մարզի Մարտունու քաղաքացետ Ա. Ավետիսյանի հետ իրականացրեց անվանական ծառատունկ: Աշխատանքային այցն ամփոփվեց Բնապահության և ընդերքի տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնում, որտեղ Ե. Տերտերյանը ծանոթացավ աշխատանքային պայմաններին, խորհրդակցության ժամանակ տվեց համապատասխան հանձնարարականներ:

Համաձայնագիր, որով սրվում է Էկոսուրիզմի և գիտական տուրիզմի մեկնարկը նոր դեմոկրոպարկում





ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորած աշխատանքային խումբն անցած շաբաթ այցելել է ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան: Աշխատանքային խմբում եղել են գերատեսչության Կենսառեսուրսների կառավարման գործակալության, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և պատասխանատու այլ ստորաբաժանումների աշխատակիցներ: Այցելության նպատակը գիտական կենտրոնի հետ համագործակցության նոր փուլի մեկնարկն էր:

Ա. Մինասյանը շրջայց է կատարել Բյուրականի աստղադիտարանի տարածքում, ծանոթացել պուրակի ներկա վիճակին: Նախարարին ներկայացվել է նաև մեծ աստղադիտակի աշխատանքը: Աստղադիտարանի տնօրինությունը դեռևս 2010 թվականին հանդես էր եկել իրեն պատկանող տարածքներում դեմոկրոպարկ հիմնելու նախաձեռնությամբ: Առաջարկի մասին տեղյակ էր պահվել ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանին, ով պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարել էր օպերատիվ գործողություններ սկսել այդ ուղղությամբ: Որպես համատեղ աշխատանքի մեկնարկ՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը ստորագրել են համագործակցության համաձայնագիր: Աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը իր ելույթում նշել է, որ աստղագետները շատ կարևորում են բնապահպանական խնդիրները, մասնավորապես գիշերային երկնքի՝ մթության պաշտպանումը արհեստական լուսավորությունից: Արծվիկ Մինասյանը նկատել է, որ Աստղադիտարանի 50 հա տարածքը հարուստ է բույսերով և կենդանիներով, և դրանց տեսակների ավելացումը կարևոր է ազգային արժեք համարվող աստղադիտարանի համար, ինչ նպատակով էլ առաջարկել են ստեղծել դեմո-

կրոպարկը: Նախարարը շեշտել է այն իրողությունը, որ Հանրապետության խոշոր գիտական կառույցը կարևորում է բնապահպանական խնդիրները, ինչը էկոմշակույթի ձևավորման ակնառու օրինակ է և ուղերձ մյուս մասնատիպ գործունեություն իրականացնող կազմակերպություններին: Այս տեսանկյունից նախարարը օրինաչափ է համարել, որ համագործակցությունը կառուցվելու է դեմոկրոպարկի հիմնման գործընթացի շուրջ: Սակայն այդ համագործակցությունը հետագայում խորացվելու է և առաջարկել է մեծացնել կիրառական տիեզերագիտության օգտագործումը շրջակա միջավայրի պահպանության գործընթացում՝ Հայաստան հրավիրելով այդ ուղղությամբ աշխատող միջազգային գիտական կենտրոնների փորձագետների: «Աստղադիտարանի տարածքում դեմոկրոպարկի առկայությունը կհամադրի էկոտուրիզմը և գիտական տուրիզմը, ինչը կնպաստի արտերկրից Հայաստան մասնագետների հոսքին: Համաձայնագրով մեծ գործընթացի մեկնարկ է տրվում՝ շրջակա միջավայրի պահպանության գործում գիտական կենտրոնների ուղղակի ներգրավման ձևաչափով»,- նկատել է Արծվիկ Մինասյանը: Կենսառեսուրսների կառավարման գործակալության բնության հատուկ պահպանվող տարածքների և դեմոկրոպարկերի կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանը, ողջունելով նախաձեռնությունը, նշել է, որ նախարարությունն ունի դեմոկրոպարկերի ստեղծման հարուստ փորձ և այն կներդնի յուրօրինակ պահպանվող տարածք ստեղծելու գործում: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի դեմոկրոպարկերի գծով գլխավոր մասնագետ Անահիտ Հարությունյանը նշել է, որ ամեն ինչ կարվի ազգային արժեք զնահատված աստղադիտարանին հարիր դեմոկրոպարկի ստեղծման ուղղությամբ:

Նախարարը տեղում պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարել է մեկշաբաթյան ժամկետում մշակել միջոցառումների ծրագիր:





Հայաստանն էկոսուրիզմը զարգացնելու վիթխարի ներուժ ունի

Երևանի Օրիոս կենտրոնի նախաձեռնությամբ և ՀՀ բնապահպանության նախարարության աջակցությամբ տեղի է ունեցել սեմինար-քննարկում «Էկոլոգիական անվտանգությունը՝ որպես զբոսաշրջության կայուն զարգացման կարևորագույն պայման» թեմայով: Սեմինարին մասնակցել են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի Կառավարում մասնագիտության «Զբոսաշրջության կառավարում» կրթական ծրագրի, ԵՊՀ «Երկրաբանության և աշխարհագրության» ֆակուլտետի ուսանողներ, Երևանի Օրիոս կենտրոնի կամավորներ: Բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության, էկոտուրիզմի աջակցության և զարգացման բաժնի մասնագետ Վահագ Սարգսյանը մասնակիցներին ներկայացրել է էկոտուրիզմի ուղղությամբ նախարարության կողմից տարվող աշխատանքները, Հայաստանում էկոտուրիզմի զարգացման ներուժը և հեռանկարները: Վ. Սարգսյանը ներկայացրել է բնության հատուկ պահպանվող տարածքներում կազմակերպվող տուրիստական երթուղիները՝ նշելով, որ դրանց ստեղծման նպատակն է նպաստել էկոտուրիզմի զարգացմանը, էկոկրթության և հասարակության իրազեկության մակարդակի բարձրացմանը: Այցելած զբոսաշրջիկները կարող են օգտվել այնպիսի ծառայություններից, ինչպիսիք են թռչնադիտարկումը, Կարմիր գրքում գրանցված կենդանիների դիտարկումը, ձիարշավը, նա-

վարկությունը, քայլարշավը, լեռնամագլցումը, ձկնորսությունը, քարածավներ, բնության հուշարձաններ և այլ այլն: Վ. Սարգսյանը նշել է, որ գնալով ածում է Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը, օրինակ՝ 2015թ. նրանց թիվը կազմել է 2054 մարդ, 2016թ.-ին՝ 2110, իսկ 2017թ.-ին՝ 3000-ից ավելի, որի արդյունքում բյուջե է ներմուծվել 7,5 մլն. դրամ: Ստացված գումարները ուղղվում են ենթակառուցվածքների զարգացմանը՝ հյուրատների բարեկարգմանը, սարքավորումների ձեռքբերմանը, հսկողության ուժեղացմանը և այլն: Նա նշել է, որ այս պահին մշակվում է էկոտուրիզմի հայեցակարգը, իսկ 2018թ. արդեն պաշտոնապես իր դռները կբացի էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոնը:

Ձեկույցով հանդես է եկել «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի նախագահ Մ. Չաքրյանը՝ «Ինչպե՞ս զարգացնել զբոսաշրջությունը ՀՀ-ում, ներկայիս էկոլոգիական մարտահրավերների պայմաններում» թեմայով:

Մ.Չաքրյանը ներկայացրել է Օրիոսի կոնվենցիան նշելով, որ այն տալիս է իմանալու, մասնակցելու և փոխելու իրավունք և ներկաները, որպես ապագա մասնագետներ, հնարավոր է նաև ապագա որոշում կայացնող մարմիններ, ճիշտ տրամաբանությամբ մասնակցեն իրենց շրջակա միջավայրին վերաբերող որոշումների կայացմանը: Միջոցառումը անցել է ինտերակտիվ ձևով և ձեռք է բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություն, թե Բնապահպանության նախարարության, թե Օրիոս կենտրոնի միջև: Միջոցառման ավարտին ներկաները տեսանյութի միջոցով ծանոթացել են նաև Կալավան համայնքի օրինակին, որտեղ մի խումբ կամավորներ, պահպանելով էկոլոգիապես մաքուր շրջակա միջավայրը, խթանում են էկոտուրիզմի զարգացումը:

Այս անգամ հասցված վնասի չափը կազմել է՝ 1.345.400 ՀՀ դրամ

ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից 13-17.11.17թթ. ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, Տեսչական մարմնին հանձնված վարչական վարույթի քննության, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերվել և արձանագրվել է թվով 29 իրավախախտում, որից 22-ի վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 1.470.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Ընդհանուր առմամբ վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է՝ 1.345.400 ՀՀ դրամ:

Բուսական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել է իրավախախտման 10 դեպք: Վերոնշյալ ժամանակահատվածում քննված վարչական վարույթներով նշանակվել է 400.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 1.312.400 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

- Վայոց ձորում հայտնաբերված ապօրինի ծառահատման 1 դեպքի (11 ուռենի) վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է 99.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

- Լոռիում հայտնաբերված ապօրինի ծառահատման 4 դեպքի (17 տարբեր տեսակի ծառ) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթներով հաշվարկվել է 976.500 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և վառելիքայտի ապօրինի տեղափոխման 2 դեպքի (3.97 խմ փայտանյութ) վերաբերյալ նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է 116.200 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

- Արմավիրում հայտնաբերված ապօրինի ծառահատման 1 դեպքի (2 բարդի) վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է 25.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

- Սյունիքում հայտնաբերված ապօրինի վառելիքայտի տեղափոխման 2 դեպքի վերաբերյալ նշանակվել է 200.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է 95.700 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

Կենդանական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել է իրավախախտման 5 դեպք: Վերոնշյալ ժամանակահատվածում քննված վարչական վարույթներով նշանակվել է 270.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 33.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

- Շիրակում հայտնաբերված խեցգետնի ապօրինի որսի 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

- Արագածոտնում հայտնաբերված ապօրինի որսի 1 դեպքի (նապաստակ) վերաբերյալ նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է

8.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, ձկան ապօրինի որսի 1 դեպքի (առգրավվել է 15 սիգ տեսակի ձուկ՝ 5 կգ) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով հաշվարկվել է 10.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

- Գեղարքունիքում հայտնաբերվել է ձկան ապօրինի որսի 1 դեպք (առգրավվել է 130 սիգ տեսակի ձուկ՝ 55 կգ, որը հանձնվել է մարզի 4 մանկապարտեզի):

- Սյունիքում հայտնաբերված ձկան ապօրինի որսի 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 70.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է 15.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս: Իրականացված ստուգայցերի արդյունքում առգրավվել է 5 հատ խեցգետնաորսիչ:

Մթնոլորտային օդի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտում արձանագրվել է իրավախախտման 6 դեպք:

- Վերոնշյալ ժամանակահատվածում քննված վարչական վարույթներով կայացվել է վարչական տուգանքի 6 որոշում՝ 300.000 ՀՀ դրամի չափով՝

- Շիրակում հայտնաբերված առանց անթափանց ծածկոցի խճի տեղափոխման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

- Արմավիր՝ հայտնաբերված առանց անթափանց ծածկոցի սորում նյութի տեղափոխման 2 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 100.000 ՀՀ դրամ:

- Երևանում հայտնաբերված առանց անթափանց շինարարական աղբի տեղափոխման 2 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 100.000 ՀՀ դրամ:

- Կոտայքում հայտնաբերված շինարարական աղբի տեղադրման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Ընդերքի պահպանության ոլորտում արձանագրվել է իրավախախտման 1 դեպք:

- Երևանում առանց թույլտվության կատարվել է խորքային հորի հորատում /երկրաբանական ուսումնասիրություն/, որի վերաբերյալ կայացվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանքի 1 որոշում:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չեն երկայացնելու համար կայացվել է վարչական տուգանքի 7 որոշում՝ 350.000 ՀՀ դրամի չափով, որից՝

- Արագածոտնում 1 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

- Արմավիրում 5 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 250.000 ՀՀ դրամ:

- Երևանում 1 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Ընթացքի մեջ է գտնվում 32 գործ:

Նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 880.200 ՀՀ դրամ:

Ազգային ժողովի ղաօգամավորները մասնակցել են նախարարության կազմակերպած ծառատունկին



Նոյեմբերի 18-ին ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվել են աշնանային ծառատունկի աշխատանքներ: ՀՀ ԱԺ չորս՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՀՀԴ և «Ելք» խմբակցությունների պատգամավորները ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցների հետ ծառատունկ են իրականացրել «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Ծառատունկին մասնակցել են ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Գրիգորյանը/ԲՀԿ/, Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը /ՀՀԿ/, ՀՀԿ խմբակցության պատգամավոր Շիրակ Թորոսյանը, «Ելք» խմբակցության պատգամավոր Լենա Նազարյանը, ՀՀԴ խմբակցության քարտուղար Աղվան Վարդանյանը, նույն խմբակցության պատգամավոր Սուրեն Մանուկյանը, ՀՀ ԲՆ աշխատակազմի, «Դիլիջան» ազգային պարկի, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման, ՀՀ ԿԱ Ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները: Ծառատունկին մեծ ակտիվություն են ցուցաբերել Դիլիջան, Հդարծին, Թեղուտ համայնքների դպրոցների, «Այբ» կրթահամալիրի աշակերտները: Վերջիններս պարզատրվել են շնորհակալագրերով, որոնք հանձնել են ՀՀ բնապահպանության նախարարը և ԱԺ պատգամավորները: Պատգամավորները իրենց շնորհավորական խոսքերում դպրոցականներին կոչ են արել պահպանել իրենց շրջապատող հարուստ բնաշխարհը և խնամել նոր տնկիները: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը դպրոցականներին ուղղված իր խոսքում կարևորել է ծառատունկը ոչ միայն կենսաբազմազանության պահպանման և վերարտադրման տեսանկյունից, այլև առաջին հերթին հասարակության մոտ բնապահպանական մշակույթի

ծնավորման անհրաժեշտությամբ և դպրոցականներին կոչ արել իրենց շրջապատի ավագ տարիքի ներկայացուցիչներին հորդորել գերծ մնալ ապօրինի ծառահատումներից: Ծառատունկի մասնակիցները «Դիլիջան» ազգային պարկի 2,5 հեկտար տարածքում տնկել են մոտ 5600 փշատերև և այլ ծառատեսակների տնկիներ: Նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող մյուս տարածքներում նոյեմբերի 18-ին ծառատեսակներ է ևս մոտ 3.5 հեկտար տարածք և տնկվել 3700 տարբեր տեսակների, այդ թվում նաև ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված ծառատեսակներ: Ծառատունկի ավարտից հետո նախարար Արծվիկ Մինասյանը ԱԺ պատգամավորներին և ծառատունկի մասնակիցներին ծանոթացրել է ազգային պարկի գրասենյակում տեղակայված տեղեկատվական կենտրոնի աշխատանքներին: Կենտրոնից ուղիղ կապով հետևում են ազգային պարկի «Դիլիջան» և «Հաղարծին» տեղամասերում վերջերս տեղադրված տեսախցիկներին, որոնք ապօրինի ծառահատումների կանխարգելման նպատակին են ծառայում: Տեղեկացվել է, որ «Շամախյան» տեղամասում նույնպես նախատեսված է տեղադրել տեսախցիկներ, և այդ գործընթացն հետաձգվում է այնտեղ արձանագրված պահակակետի այրման դեպքի հետ կապված քննչական գործողությունների պատճառով, որոնց ավարտից հետո միայն հնարավոր կլինի այդ տեղամասում տեղադրել տեսախցիկներ: Ա. Մինասյանը հայտնել է, որ ազգային պարկում նախատեսված է տեղադրել նաև ձայնային սենսորներ, որոնք կարծազանքեն բենզաջրոցների և մեքենաների ձայներին: Տեսախցիկների և սենսորների աշխատանքներին հետևելու հնարավորություն կունենան նաև տեսչական մարմնի աշխատակիցները, ինչպես նաև յուրաքանչյուր ցանկացող: Այդ միջոցառումներն ուղղված են ապօրինի ծառահատումների դեմ և նախատեսված է այն կիրառել նաև բնության հատուկ պահպանվող մյուս բոլոր տարածքներում:

Պիսի ձևավորենք բնությունը տաճող, մարդուն սիրող և ղեկավարան արժեքն իմացող ֆաղափացի



«ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ. ԱՅԱԶԱՆԳ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒՄՆԵՐ» խորագրով ցուցահանդեսը Նկարիչների միությունում

Նոյեմբերի 14-ին Հայաստանի նկարիչների միությունում բացվեց «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ. ԱՅԱԶԱՆԳ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒՄՆԵՐ» խորագրով ցուցահանդեսը: Նկարիչների աշխատանքներն արվել են «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» պետական արգելոցում: Մտահղացումն ու իրագործումը ՀՀ բնապահպանության նախարարությանն ու Հայաստանի նկարիչների միությանն էր: Ներկայացվել են շուրջ 80 աշխատանքներ, որոնք «Խոսրովի անտառ» պետական արգելոց այցելությունների արդյունքն են և պատկերում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հրաշագեղ բնությունն ու, միաժամանակ, անդրադառնում այս տարվա օգոստոսին արգելոցում բռնկված սաստիկ հրդեհից տուժած տարածքներին: Հանդիսավոր բացմա-

նը ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՆՄ նախագահ Կարեն Աղամյանը, ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրեն Հրաչյա Հովակիմյանը, ցուցահանդեսի համակարգող Սևադա Սարգսյանը, բնապահպան Կարինե Դանիելյանը: Կարեն Աղամյանը հրաշալի նախածեռնության իրականացման համար իր շնորհակալությունն է հայտնել բնապահպանության նախարարությանը, նշել էկոմշակույթի ձևավորման գործում նման միջոցառումների կարևորությունը: Արծրուն Պեպանյանը նշել է, որ ցուցադրությունը միտված է կարևոր մի գործի, որը կոչվում է ազգային վերափոխում և որի նպատակն է ունենալ այլ որակի քաղաքացի, այլ որակի պետություն: «Մենք բոլորս այսօր ներկա ենք կարևոր, անկյունաքարային միջոցառման, և թող մեզանից յուրաքանչյուրը հպարտությամբ գիտակցի, որ ինքը մասնակից է ազգային մեծ գործի ու իր ներդրումն է բերում այդ մեծ գործին: Մենք այլընտրանք չունենք, մենք պիտի ձևավորենք բնություն պաշտող, մարդ սիրող, պետության արժեքն իմացող քաղաքացի, և կանենք դա միասին», - իր խոսքում նշել է բնապահպանության նախարարի խորհրդականը: Ցուցադրությունը տևեց մինչև Նոյեմբերի 20-ը:

«Անմահության մարտիկները» խորագրով ցուցահանդես բնության ղեկավարան թանգարանում

Նոյեմբերի 24-ին Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի ունեցավ «Անմահության մարտիկները» խորագիրը կրող ցուցահանդեսի բացումը, որի հեղինակը Աննա Կոստանյանն է: Ցուցահանդեսում ներկայացված էին դիմանկարներ, որոնց նայելիս կարող ես կարդալ մի ամբողջ ժողովրդի պատմություն: Մարտիկներ, որոնք իրենց արյան գնով պաշտպանեցին մեր հայրենիքը, մարտիկներ, որոնք թողնելով իրենց կանանց ու երեխաներին, դրսևորեցին հայ տղամարդուն վայել պատվախնդրություն և իրենց առնական խոսքն ասացին մարտի դաշտում: Խոնարհվում ենք հայ մայրե-

րի առաջ, քանի որ նրանք ծնեցին այնպիսի դյուցազուններ, ինչպիսիք են Վազգեն Սարգսյանը, Աշոտ Ղուլյանը, Մոնթե Մելքոնյանը, Թաթուլ Կրպեյանը, մեր կենդանի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանը և բազում-բազում այլ հերոսներ, որոնք իրենց հայրենիքի պատիվը բարձր դասեցին սեփական կյանքից: Մենք բոլորս հպարտությամբ կարող ենք նշել, որ մեր երիտասարդ սերունդը շարունակեց իրենց ավագ եղբայրների գործը ապրիլյան քառօրյա պատերազմում անսասան պահելով մեր դիրքերը: Տղաներ, որոնք հերոսացան 18 տարեկան հասակում և, որոնց անունները դաջվեց մեր սրտերում ու իհարկե Հայոց պատմության էջերում: Նրանք իրենց երիտասարդ տարիքում կերտեցին ազգի հերոսական պատմություն մոր էջերը, ինչպիսին շատ ու շատ ազգեր չեն կերտում դարերի ընթացքում: Միջոցառումը հայրենասիրական երգերով եզրափակեցին Ջազ քոլեջի երիտասարդ ուսանողները: Միջոցառման ավարտին թանգարանի տնօրինությանը հանձնվեց հավաստագիր ցուցահանդեսին աջակցելու համար:

Նախագիծը՝ Արծրուն Պեպանյանի
խմբագիր՝ Մանվել Սևրջյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517